Պարույր Սևակ

Նորից շունն ու գայլը

Կար մի ժամանակ, որ Գայլի ցեղը
Հենց ինքն էր ապրում Շների տեղը.
Ապրում էր Գայլը մարդկանց բակերում,
Իսկ Շունն՝ անտառում, քարի տակերում:
Գայլերին մարդն էր հաց ու թաց տալիս,
Իսկ Շունը ինքն էր իր օրը լալիս:
Եվ քարում-սարում ու հին անտառում
Շատ շներ էին շուտ հիվանդանում.
Մեկ տեսար՝ հարբուխ, մեկ՝գրիպ, մեկ՝հազ,-
Ամեն օր մի նոր ցավ էր անպակաս:
Ու շա՜տ խնդրեցին մի օր շները
Գայլուկ եղբոր հետ փոխել բները.
-Անտառում ապրեք միառժամանակ,
Իսկ մենք՝խեղճերս, մարդկանց մոտ մնանք:
Գայլ եղբայրները նրանց խղճացին,
Իսկ հետո իրենք... հազա՜ր զղջացին.
Իրենց նոր կյանքը, հոտած բները
Շա՜տ հավանեցին նորեկ Շները:
Քիչ խանգարում էր լոկ շղթան վզի,
Բայց հացի հո՜տը, բա հա՜մը մսի:
Ավելի լավ չէ՞ վզների շղթան,

Քան սոված-ծարավ դես ու դեն վազ տան,
Դողդողան ցրտից, փոշտան, հազան,
Ի՞նչ է թե կոչեն անշղթա գազան,
Եվ ազա՛տ կոչեն:
Չէ՛, հիմար հո չեն...
Ու խելոքացած առողջ Շները
Է՛լ չթողեցին իրենց բները:
Իսկ խեղճ Գայլերն էլ մնացին դրսում:
Երբ նրանք շատ են քաղցում ու մրսում,
Մինչև հիմա էլ ոռնում են դրսում
Եվ այդ ոռնոցով հարցնում Շներին.
«Բա չլավացա՞ք, բա ետ չեք դառնո՞ւմ»:
Շներն էլ՝ «հա՛ֆ-հա՛ֆ», իրենց բներից
Ասում են «չէ՛-չէ՛», տեղից վեր թռնում,
Քաշում են իրենց վզների շղթան,
Որ այդ աներես գայլերին վախ տան,
Թե իզուր տեղը ի՞նչ են հա ոռնում...